

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/4

30 հունիսի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գայանե Երիցյանի 04.06.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 13.05.2015 թ-ի թիվ 6107375 ակտի դեմ:

Ա/Ձ Գայանե Երիցյանի գանգատում բերված փաստարկները.

Համաձայն Վանաձորի տարածքային հարկային տեսչության 07.04.2015 թ-ի թիվ 6107375 հանձնարարագրի անհատ ձեռնարկատեր Գայանե Երիցյանի (այսուհետ նաև գանգատաբեր) մոտ իրականացվել է հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 13.05.2015 թ-ին կազմվել է թիվ 6107375 ստուգման ակտը, որով իբրև կատարված գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու համար տուգանք է առաջադրվել 150 000 դրամի չափով:

Գանգատաբերը գտնում է, որ ստուգման ակտը կազմվել է օրենսդրության պահանջների խախտումներով և ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

1. ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 13.05.2015 թ-ի թիվ 6107375 ակտում (այսուհետ նաև Ակտ) նշված է, որ «05.05.2015թ-ին ժամը 18:17-ին ք.Ալավերդի Սանահին Սարահարթ 2/30 հասցեում գտնվող Հայանե Երիցյան Ա/Ձ-ին պատկանող առևտրի կետից կատարվեց գնում 200 դրամի չափով՝ 2 հատ մարտկոց, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառողուհի Անահիտ Մոսինյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց»:

Ակտով արձանագրվածի հետ գանգատաբերը համաձայն չէ, քանի որ երբ ստուգող անձինք ներկայացել են և հայտնել, որ կատարված գնման և ՀԴՄ կտրոն չի տրամադրվել, պահանջվել է ներկայացնել գնորդին՝ ճշտելու համար, թե նշված ապրանքը գնվել է իր խանութից, թե այլ վայրից: Սակայն, ստուգողները այդպես էլ չեն ներկայացրել գնորդին:

Ըստ Ակտի, գնումը կատարվել է ժամը 18:17-ին, այսինքն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված աշխատանքային ժամի ավարտից հետո, հետևապես արդյոք ստուգողներն իրավունք ունեին աշխատանքային ժամից հետո տնտեսվարողի մոտ ստուգում կատարել:

2. Ակտում նշված է, որ խախտվել է ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշման 2-րդ հավելվածի 40-րդ կետի պահանջները, և նշված խախտման համար առաջադրվել է «Հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված տուգանք:

Նշվածի կապակցությամբ գանգատաբերը հայտնում է, որ ՀԴՄ-ն, որի միջոցով իրականացնում է գործունեությունը, նոր սերնդի չէ: Ակտում նշված ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշման պահանջները տարածվում են միայն նոր սերնդի ՀԴՄ-ների նկատմամբ, հետևապես նշված որոշման պահանջները գանգատաբերի կողմից չէին կարող խախտվել:

3. Ստացվել են Վանաձորի տարածքային հարկային տեսչության թիվ 6107375 ստուգման ակտի նախագիծը, ապա նաև Ակտը: Ակտի նախագծում և վերջնական

ակտում ստուգողների դրված ստորագրությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ս.Գևորգյանի ստորագրությունները տարբեր են: Տվյալ դեպքում հարց է առաջանում, թե այդ ստորագրություններից որն է իրականը:

Գանգատաբերը գտնում է, որ վերը նշված փաստերը հիմնավորում են Ակտը օրենսդրության պահանջների խախտմամբ կազմված լինելը, հետևապես ներկայացված գանգատով խնդրում է անվավեր ճանաչել Վանաձորի տարածքային հարկային տեսչության 13.05.2015 թ-ի թիվ 6107375 ակտը:

«Քինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 07.04.2015 թ. թիվ 6107375 հանձնարարագրի համաձայն ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմին վերապահված իրավասությունների սահմաններում ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի առանձին պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով Ա/Ձ Գայանե Երիցյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 13.05.2015 թ-ի թիվ 6107375 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ քաղաքացի Սասուն Պետրոսյանի կողմից 05.05.2015 թ-ին ժամը 18:17-ին ք.Ալավերդի, Սանահին-Սարահարթ 2/30 հասցեում գտնվող Ա/Ձ Գայանե Երիցյանին պատկանող առևտրի կետից կատարվել է գնում 200 դրամի չափով՝ 2 հատ մարտկոց, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Վաճառողուհի Անահիտ Մոսինյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 18:17-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն, որում գնման գումարը ներառված չի եղել: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 200 դրամը, ժամը 18:18-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 18:18-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը՝ 200 դրամ գումարով: Սահմանված ձևով կատարվել է գնված ապրանքի հետվերադարձ և ետ է ստացվել գնման գումարը:

Ստուգմամբ արձանագրվել է տնտեսավարող սուբյեկտի կողմից ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման 2-րդ հավելվածի 40-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների խախտման փաստը, և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝ տնտեսավարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով սահմանված կարգով առաջադրվել է տուգանք 150.000 դրամի չափով:

Սույն գործին առնչվող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումը կատարվել է և դրա արդյունքում Ակտը

կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ հետևյալ պատճառաբանությամբ:

Այսպես, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, «Ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր, որտեղ նշվում են ստուգում իրականացնող մարմնի անվանումը, ստուգվող տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը (հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների դեպքում՝ ստուգվող տնտեսավարող սուբյեկտի (վերակազմակերպման դեպքերում իրավանախորդի (իրավանախորդների) լրիվ անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը (համարները), ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգաթերթով նախատեսված այն հարցերի շրջանակը, որոնք անհրաժեշտ է պարզաբանել տվյալ ստուգման ընթացքում (հարկային և մաքսային մարմինների, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողության դեպքերում ստուգման հարցերը), ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման նպատակը, ժամկետը, ստուգման իրավական հիմքերը, սույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասով նախատեսված դեպքերում՝ նաև ստուգումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները, իսկ նույն մասով նախատեսված դիմում կամ տեղեկատվություն ստանալու դեպքերում՝ նաև դրանք տրամադրողի տվյալները»:

Վերոգրյալ իրավանորմի դրույթներից հետևում է, որ ստուգման հանձնարարագրում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) տվյալներից բացի այլ անձի (անձանց) տվյալներ չեն կարող նշվել:

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 07.04.2015 թ-ի թիվ 6107375 հանձնարարագրի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրեց, որ դրանում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց տվյալներից բացի նշված են նաև այլ անձանց (քաղաքացիների) տվյալները, ինչը վերոգրյալ իրավանորմի դրույթների խախտում է: Ավելին, Ակտի 1-ին կետում նկարագրված գնումն իրականացվել է քաղաքացի Սասուն Պետրոսյանի կողմից, որը, սակայն, նման լիազորությամբ օժտված չի եղել:

Բացի այդ, Ակտի 1-ին կետում որպես իրավական նորմ, որի պահանջները չեն կատարվել, նշված է ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման 2-րդ հավելվածի 40-րդ կետի 2-րդ ենթակետը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ սահմանված կարգավորումները վերաբերվում են բացառապես նոր սերնդի ՀԴՄ-ներին, այն դեպքում երբ, ստուգման ընթացքում ք.Ալավերդի, Սանահին-Սարահարթ 2/30 հասցեում գտնվող առևտրի կետում տեղադրված ՀԴՄ-ն եղել է հին սերնդի: Այսինքն, Ակտում իրավական նորմը, որի պահանջները չեն կատարվել, սխալ է մատնանշված:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն

ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Քննարկվող դեպքում ստուգումը կատարվել է և դրա արդյունքում Ակտը կազմվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ակտի դեմ Ա/Ձ Գայանե Երիցյանի կողմից բերված գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ-13.05.2015 թ-ի թիվ 6107375 ակտը:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ